# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 307
*20 դեկտեմբեր 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N41-Ա, N42-Ա, N43-Ա, N44-Ա, N45-Ա, N46-Ա, N47-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան*
*032268781*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 41-Ա

### ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37 հոդվածով և հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ավագանու 2018թ.-ի նոյեմբերի 13-ի թիվ 41-Ն <<Լեռնապատ համայնքի 2018թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին>> որոշումը՝

Որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2018թ.-ի փոփոխված բյուջեի՝ եռամսյակային համամասնությունները համաձայն հավելված 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ղեկավարի 2018թ.-ի հոկտեմբերի 26-ի <<Լեռնապատ համայնքի 2018թ.-ի բյուջեի եռամսյակային բախշումը հաստատելու մասին >> N36-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. նոյմբերի 13
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք

ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

15 նոյեմբերի 2018 թվականի թիվ 42-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-041-0022-0019 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ԱՊՐԵՍ ԱՇՈՏԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապրես Աշոտի Ոսկանյանի դիմումը, դատարանի N 2/2699-2003թ. վճիռը, լիցենզավորված մասնագետի կողմից կազմված հատակագիծը, պարզեցինք, որ Լեռնապատ համայնքում Ապրես Ոսկանյանին պատկանող սեփական տունը և հողամասը քարտեզագրման ժամանակ թույլ տրված սխալի պատճառով քարտեզագրվել է այլ տեղում և չափի սխալներով, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. 186-Ն հրամանով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնապատ համայնքի 06-041-0022-0019 ծածկագրի տակ գտնվող 0.40969 հա տնամերձ հողամասը ճանաչել Ապրես Աշոտի Ոսկանյանի(ծնվ. 1958թ.), սեփականության իրավունքը:
2. Ճշտել 06-041-0022-0019 հողամասի տեղն ու չափերը համաձայն հաստատված հատակագծի:
3. ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա չգտնվող, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 1999 թվականին կառուցված 118,14 քմ բնակելի տունը, 64,12 քմ կիսանկուղը, 64,68 քմ անասնագոմը ճանաչել Ապրես Աշոտի Ոսկանյանի սեփականության իրավունքը:
4. Տրամադրել փոստային հասցե՝ գ. Լեռնապատ 27 փող 7 տուն:
5. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ղեկավարի 13 հոկտեմբերի 2017 թվականի թիվ 32-Ա որոշումը:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. նոյեմբերի 15

գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

04 դեկտեմբերի 2018 թվականի թիվ 43-Ա

## ՄՀԵՐ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՃՇՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով թիվ 076082 վկայականը, Լեռնապատի բնակիչ Մհեր Զավենի Մալխասյանի դիմումը, պարզվեց որ թիվ 076082 սեփականության իրավունքի վկայականում գրառված չէ համասեփականատերերի հայրանունները, նշված չէ հողամասի և տան ծածկագիրը ու հասցեն, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 4 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 48 կետով`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Թիվ 076082 սեփականության իրավունքի վկայականում ավելացնել համասեփականատերերի հայրանունները.
   Մալխասյան Զավեն Սարգսի, Մալխասյան Մարգո Գարեգինի, Մալխասյան Մհեր Զավենի, Հարությունյան Կարինե Ռուբենի, Մալխասյան Կարեն Մհերի, Մալխասյան Նարեկ Մհերի:
2. Վկայականում կատարել ծածկագրերի ամբողջական գրառում, հողամասի համար` 06-041-0016-0012, բնակելի տան համար` 06-041-0016-0012-001
3. Ըստ անհրաժեշտության ուղղումները կատարել նաև գյուղապետարանի կողմից տրված 01.12.1998թ. N 05 քաղվածքում և կադաստրային գործում առկա` վկայականի գրանցման համար հիմք հանդիսացած այլ փաստաթղթերում:
4. Տրամադրել փոստային հասցե` գ. Լեռնապատ 34 փող. 40 տուն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 4
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2018 թվականի թիվ 44- Ա

## ՏԻԳՐԱՆ ԱՎԱԳՅԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Ավագյանի դիմումը, թիվ 26072016-06-0029 վկայականը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետերով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով, 13 հոդվածի 1-ին կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տիգրան Մարսելի Ավագյանին պատկանող Լեռնապատ համայնքի 06-041-0201-0083 ծածկագրով 0,1189 հա բնակավայրերի հասարակական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը օրենքի ուժով փոխադրել արդյունաբերական նպատակային և «գյուղատնտեսական արտադրական օբյեկտների» գործառնական նշանակության հողերի:
2. Տիգրան Մարսելի Ավագյանին տրամադրել շինարարության թույլատվություն, վերը նշված հողամասում, նախագծային փաստաթղթերին համապատասխան անասնագոմ կառուցելու համար:
3. Հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 6
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբերի 2018 թվականի թիվ 45- Ա

## ԳՈՒՐԳԵՆ ԲԱԲԱՅԱՆԻ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետերով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 48 կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Լեռնապատի նախկին բնակիչներ, մահացած՝ Գուրգեն Վաղինակի Բաբայանին և Լիդիյա Վասիլի Բաբայանին պատկանող 06-041-0175-0025 կադաստրային ծածկագրում գտնվող տնատիրությանը տրամադրել փոստային հասցե՝ գ.Լեռնապատ 26 փողոց 7 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 14
գ. Լեռնապատ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 46-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և առաջնորդվելով Լեռնապատ համայնքի ավագանու 2018թ.-ի 18 դեկտեմբերի թիվ 46-Ն <<Լեռնապատ համայնքի 2019թ.-ի բյուջեն հաստատելու մասին>> որոշմամբ՝

որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2019թ.-ի բյուջեն՝ եկամտային և ելքային մասերի բախշումը ըստ եռամսյակների:

2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2019թ.-ի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի
18
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2018 թվականի թիվ 47-Ա

## ՄԻՇԱ ԹՈՒՄԱՋՅԱՆԻ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միշա, Վահան, Համասփյուռ, Նարինե Թումազյանների հողամասերից հրաժարվելու վերաբերյալ դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով, 77 հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 101 հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Միշա, Վահան, Համասփյուռ, Նարինե Թումազյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ հողամասերի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Լեռնապատ համայնքի սեփականության իրավունքը.
   - 06-041-0246-0027 ծածկագրով 0,3911 հա խոտհարքը,
   - 06-041-0246-0028 ծածկագրով 0,4963 հա խոտհարքը:
2. Սույն հողամասերը չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չեն առաջացնում սերվիտուտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 19
գ. Լեռնապատ